

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Առաջադրանքների լուծման համար տրվում է **75** րոպե **5-6-րդ դասարաններ**

- Յուրաքանչյուր առաջադրանքի համար տրված պատասխաններից ճիշտ է միայն մեկը:
- Չլուծված առաջադրանքի համար միավորներ չեն գումարվում և չեն հանվում:
- Մրցույթի մասնակիցը կարող է վաստակել առավելագույնը 120 միավոր:
- Մրցույթի ավարտին առաջադրանքների թերթիկը մնում է մասնակցի մոտ:
- Մրցույթի մասնակիցներին ներկայացվող գլխավոր պահանջը առաջադրանքներն ինքնուրույն և ազնվորեն կատարելն է:

3 միավոր գնահատվող առաջադրանքներ

1. Ի՞նչ բառ է թաքցրել մեղվիկը:

*բարձրաքիթ, մեծաբերան, երկարականջ, լայնաճակատ, թավաբեղ, սրատամ, լայնաշուրթ,*

Ա. կարճաթև    Բ. շեղաչք    Գ. լայնաթիկունք    Դ. բարակիրան    Ե. երկարավիզ

2. Տարբերակներից ո՞րն Արշակը տեղադրեց **⊗ արդ, ⊗ տառ, ⊗ տակ, ⊗ արկած, ⊗ արար, ⊗ այր** բառաշարքի բոլոր բառերում ծաղկի նշանի փոխարեն և ստացավ նոր բառեր:

Ա. ս    Բ. կ    Գ. դ    Դ. վ    Ե. մ

3. Ո՞ր բառից «բառքամոցի» խաղի կանոններով կքամվեն **կապ, ապար, պարկ** բառերը:

Ա. կապար    Բ. պարեկ    Գ. ապտակ    Դ. կերպար    Ե. կրպակ

4. Լևոնը **վաճառասեղան** բառից հանեց այն մասը, որով կարում են, հետո այն մասը, որ նշանակում է ելույթ: Ո՞ր տառն ավելացնի Լևոնը մնացած տառերին, որ ստանա բառ, որը և՛ անուն է, և՛ պաշտպանական միջոց:

Ա. կ    Բ. գ    Գ. հ    Դ. ղ    Ե. զ

5. **Հարկատու, ներկատու, ծաղկատու, եղեգնակատու, վարկատու** բառաշարքի բառերից չորսը ենթարկվում են նույն օրինաչափությանը: Ո՞րը չի ենթարկվում այդ օրինաչափությանը:

Ա. հարկատու    Բ. ներկատու    Գ. ծաղկատու    Դ. եղեգնակատու    Ե. վարկատու

6. Ի՞նչ է գաղտնագրվել նկարելուկով:



ԲԲԲ

1=3

Ա. բորենու վարք    Բ. բարձր բերք    Գ. բերք ու բարիք  
Դ. ցորենի ցանք    Ե. ցորենի բերք

7. Տարբերակներից ո՞րը պետք է տեղադրել մեղվիկի փոխարեն, որ ստացվի իմաստով իրարից բոլորովին տարբեր երկու նախադասություն:

Մի մեծ գյուղում կար:  
 գյուղում մի մեծ կար:

Ա. տուն    Բ. գրադարան    Գ. ձի    Դ. ակումբ    Ե. հոր

8. Աջ կողմում բերված է տառաթվային ծածկագիր, որում յուրաքանչյուր տառին համապատասխանում է մեկ թվանշան: Նույն տառերին համապատասխանում են նույն թվանշանները: Բերված տարբերակներից ո՞րն է համապատասխանում այդ տառաթվային ծածկագրին:

ՄԵԿ  
+  
ԲՆԸ  
ՏԱՍԸ

Ա. 446	Բ. 570	Գ. 670	Դ. 930	Ե. 830
+	+	+	+	+
<u>590</u>	<u>642</u>	<u>542</u>	<u>642</u>	<u>642</u>
1036	1212	1212	1572	1472

9. **Վար-վարկ** և **արկ-բարկ** բառագույգերը կազմված են որոշակի օրինաչափությամբ: Տարբերակներից ո՞րն է կազմված այդ նույն օրինաչափությամբ:

Ա. տուն-տունկ և ունկ-սունկ    Բ. սար-սարք և վար-վարք    Գ. անձ-սանձ և այծ-կայծ  
Դ. լոր-քլոր և այց-հայց    Ե. թան-թանկ և կամ-կամք

10. Ո՞ր բառն է որոշակի օրինաչափությամբ թաքնվել **ագնիվ, նվեր, կահույք, արթուն, թթվասեր** բառաշարքում:

Ա. գենիթ    Բ. զվարթ    Գ. արյուն    Դ. անկում    Ե. նվնվան

4 միավոր գնահատվող առաջադրանքներ

11. Տարբերակների բառագույգերից չորսը կազմված են որոշակի օրինաչափությամբ: Ո՞ր բառագույգն է խախտել այդ օրինաչափությունը:

Ա. նախշ-շուն    Բ. կաղին-նամակ    Գ. պայտ-տապ  
Դ. շուկա-ավիշ    Ե. բանակ-կանաչ

12. Բերված տարբերակները, բացի մեկից, որոշակի օրինաչափությամբ կապված են իրար: Նրանցից ո՞րը չի ենթարկվում այդ օրինաչափությանը:

Ա. բացուխուփ    Բ. թարսուշիտակ    Գ. տարուբեր  
Դ. ելումուտ    Ե. լուռումունջ

13. **Խավար, վարար, անուշ, վտակ, կապար** բառերից չորսը նույն օրինաչափությամբ աստիճանաբար մինչև վերջ «հավում» են: Ո՞ր բառը մինչև վերջ չի հավում:

Ա. խավար    Բ. վարար    Գ. անուշ    Դ. վտակ    Ե. կապար

14. **Մի ձմեռ սոված գայլը մոտեցավ գյուղին, որ իր գլխի ճարը տեսնի, մի կորած-մոլորած ոչխար գտնի և փորը խաբի, բայց ականջները սրած շները քնած չէին: Նա հազիվ գլուխն ազատեց:** Ամենաշատը քանի՞ դարձվածք կա բերված հատվածում:


Ա. 1    Բ. 2    Գ. 4    Դ. 5    Ե. ոչ մի

15. Ի՞նչ նախադասություն կստանանք, եթե յուրաքանչյուր տառախմբում 3 տառ ջնջենք և տառերի տեղերը չփոխենք:

**ՊԱՏՎԱՐԻՆԸ ԶՕԳՆԱԿԾԱՆՑԸ ՎՆՄԱՏՎԵՑ:**

Ա. Պատշարի օգնականը նստեց:    Բ. Պատշարը հանկարծ ստեց:  
Գ. Պատվարին հոգնած նստեց:    Դ. Պատվարը ականից վնասվեց:  
Ե. Պատշարը օգնականին սաստեց:

16. Ի՞նչ բառ է թաքցրել մեղվիկը:

հմայանք - համայնք  
մարտագիծ - տրամագիծ  
վերնագրել - 

Ա. գերեվարել    Բ. անգրավելի    Գ. ներգրավել    Դ. վերագրել    Ե. անվարգել

17. Երբ Գարեգինը և Կոմիտասը ներկում էին խանութի հին գործոցները, պարզվեց, որ նրանցից մեկի վրա թվային ծածկագիր կա: Ամենաշատը քանի՞ հաջորդաբար գրված տարբեր թվանշանից է բաղկացած այդ ծածկագիրը: Պատասխանը թաքնվել է նախադասության մեջ:

Ա. հինգ    Բ. վեց    Գ. յոթ    Դ. ութ    Ե. ինը

18. Ո՞ր դարձվածքի իմաստն է ծածկագրվել բերված տառաշարքում:

չա, փի, ցր, ուր, սգ, ուլ, աք, ան, ել

Ա. երկինք հանել    Բ. ծնկի գալ    Գ. հոնքերը կիտել  
Դ. խոսքը ջուրը գցել    Ե. ինչպես ձուկը ջրում

19. Տարբերակներից չորսում երկուական տառ նույն սկզբունքով և՛ պոչ է, և՛ գլուխ: Ո՞ր տարբերակն է գուրկ այս հասկությունից:

Ա. բրուտակավ    Բ. այծամորուք    Գ. գահակից  
Դ. հրեշտակադեմ    Ե. ժանգագուրկ

20. Ծովինարը որոշակի օրինաչափությամբ կազմեց **ածուխ, գանձ, եթեր, էական, թաթար** բառաշարքը: Միերը բառաշարքում գտավ մեկ այլ օրինաչափություն և շարունակեց բառաշարքը՝ պահպանելով երկու օրինաչափությունները: Տարբերակներից ո՞րը գրեց Միերը:

Ա. ժխոր    Բ. լույս    Գ. իհարկե    Դ. ժայռ    Ե. իզուր

### 5 միավոր գնահատվող առաջադրանքներ

21. **Նավակ, տնակ, լեզվակ, վիպակ, թռչնակ, տեսակ, կոտորակ, առվակ, գետակ, օրինակ** բառերից ամենաշատը քանիստ՞ն է **ակ**-ը նվազական-փաղաքշական իմաստ արտահայտում:

Ա. 4    Բ. 5    Գ. 6    Դ. 7    Ե. 8

22. Ո՞ր բառի «ընկերը» չկա **արգելապատնեշ**-ի վրայով դեպի հետ վազող Արեգի ճանապարհին:

Ա. կարմիր    Բ. բնակավայր    Գ. շոգ    Դ. այնուհետև    Ե. շտապ

23. Ի՞նչ թևավոր խոսք է գաղտնագրվել բերված խառնագրում:

**իցեթղահասնետակե**

Ա. եկա, տեսա, հաղթեցի    Բ. երկնային մանանա    Գ. կարապի երգ  
Դ. կոկորդիլոսի արցունքներ    Ե. ախորժակն ուտելիս է բացվում

24. **Գավառագետ** բառում, ձախից աջ և աջից ձախ ուղղություններով և առանց տառերը տեղաշարժելու, ամենաշատը քանի՞ հաջորդաբար գրված տարբեր բառեր կան, որոնք ունեն կենտ թվով տառեր և պահպանել են ուղիղ ձևը:

Ա. 3    Բ. 4    Գ. 5    Դ. 6    Ե. 7

25. **Անլար, անկապ, անկար, անբան, անծիր, անվար** բառերը նույն ածպարարական հնարքով փոխակերպվեցին ու դարձան նոր բառեր: Տարբերակներից որո՞նք են թաքնվել երկու «համով» բառերը:

Ա. անլար, անկապ    Բ. անբան, անծիր    Գ. անվար, անբան  
Դ. անծիր, անլար    Ե. անկապ, անվար


26. Եթե **անխոչընդոտ, բարորություն, երկմտել, անարգել, անփորցանք, գազաթ, պատրաստակամ, բարցրաբերք, սիրահեծար, տարակուսել, բարձրակետ** բառերից ջնջենք սխալ գրվածները, կստանանք բառեր, որոնք՝

Ա. դասավորված են այբբենական ճիշտ հաջորդականությամբ  
Բ. կազմում են հակառակ իմաստով բառագույզեր  
Գ. կազմում են մոտ իմաստով բառագույզեր  
Դ. ունեն վանկերի միևնույն քանակը  
Ե. ունեն ձայնավորների միևնույն քանակը

27. **Լողորդ Թաթույր, աղմուկից բոլորովին հոգնած, պարտիզպանի վիթխարի այգում հանգիստ քնեց մինչև լուսանայր:** Ամենաշատը քանի՞ տարբեր կենդանի է հնարամտորեն թաքնվել բերված նախադասության մեջ:

Ա. 4    Բ. 5    Գ. 6    Դ. 7    Ե. 8

28. Ի՞նչ թիվ է թաքցրել մեղվիկը:

կատու - 4 կատվաձագ - 3	հաց - 3 հացթուխ - 2	պահեստ - 6 պահեստապետ - 4	սնունդ - 5 սննդարար - 
---------------------------	------------------------	------------------------------	--


Ա. 3    Բ. 4    Գ. 5    Դ. 6    Ե. 7

29. Ի՞նչ օրինաչափությամբ է կազմված թվաշարքը:

**8, 28, 7, 38, 18, 17, 68, 47, 98**

Ա. ըստ տառերի թվային արժեքների  
Բ. ըստ թվերի գույգ և կենտ լինելու  
Գ. ըստ շարքում տառերի դիրքի  
Դ. ըստ թվերի անվանումներում առկա օրինաչափության  
Ե. ըստ թվերի աճման կարգի

30. Ի՞նչ բառ է թաքցրել մեղվիկը:

**աշխարհ, հրաման, նամակ, կամք, քմահաճ,** 

Ա. ճպուռ    Բ. ճկույթ    Գ. ճահիճ    Դ. ճանճ    Ե. ճառագայթ